ՀԱՅԱՍՏԱՆ

Հոկտեմբերի 3, 2023 թ.

Առանցքային տվյալներ.

100,617
փախստական է Հայաստան ժամանել

91,924
փախստական հաշվառվել է պետական մարմիններում

48,649
փախստականի ժամանակավոր կացարան է տրամադրել Կառավարությունը

Ֆինանսավորում. 12.8 միլիոն ԱՄՆ դոլար

է պահանջվում 2023 թվականին, այդ թվում՝ արտակարգ իրավիճակին արձագանքելու համար



3.7 միլիոն ԱՄՆ դոլար

Ստացված առ 2023 թ. սեպտեմբերի 18-ը

Իրավիճակի վերաբերյալ թարմ տվյալներ

Ընդամենը մեկ շաբաթում ավելի քան 100,000 փախստական է ժամանել Հայաստան, օրական մոտ 500-ից մինչեւ 40,000 հազար՝ միայն սեպտեմբերի 27-ին: Նրանց գրեթե կեսը երեխաներ են (31%) կամ տարեցներ (18%): Պետական մարմինները հաշվառում են փախստականներին՝ տեղաբաշխելով երկրի տարբեր մարզեր: Փախստականներից շատերը շատ քիչ իրերով են գալիս եւ **անհետաձգելի օգնության** կարիք են զգում, ներառյալ կացարանի եւ առաջին անհրաժեշտության պարագաների, ինչպես նաեւ բժշկական եւ հոգեբանասոցիալական աջակցության:

ՄԱԿ ՓԳՀ աշխատակիցը ստուգում է 16 բեռնատարներից իջեցված իրերը՝ առաջին անհրաժեշտության ապրանքները ՀՀ-ում բաշխելու համար: © UNHCR/Hrant Sahakyan

Շտապ անհրաժեշտ է ինչպես անհապաղ, այնպես էլ երկարաժամկետ օթեւաններ: Կառավարությունը միջազգային եւ տեղական համայնքների հետ միասնաբար **աշխատում է առավել հրատապ կարիքների բավարարման ուղղությամբ՝ միաժամանակ փորձելով երկարաժամկետ լուծումներ գտնել** (այսինքն՝ բնակապահովում, կենսապահովում եւ կրթություն):

ՄԱԿ ՓԳՀ արձագանքում արտակարգ իրավիճակին

Պաշտպանություն.

- ՄԱԿ ՓԳՀ թիմերը մշտադիտարկում են իրականացնում մարդասիրական օգնության համակարգման կենտրոններում՝ գնահատելու փախստականների կարիքները եւ տրամադրելու պաշտպանության ոլորտում խորհրդատվություն եւ տեղեկություններ: Առ այսօր ՄԱԿ ՓԳՀ-ն երկրի սահմանամերձ եւ Երեւանի մերձակա վայրերում գտնվող 11 կենտրոն է այցելել, որտեղ կարիքների նախնական գնահատմամբ վեր են հանվել փախստականների առավել հրատապ կարիքները, մասնավորապես սննդամթերքի, հագուստի, օթեւանի եւ դեղորայքի հետ կապված:
- ՄԱԿ ՓԳՀ-ն տեխնիկական սարքավորումներ է տրամադրել՝ դյուրացնելու կառավարության կողմից հիվանդանոցներում, խնամքի կենտրոններում եւ այլ վայրերում գտնվող անձանց հաշվառման գործընթացը:

Կացարան եւ առաջին անհրաժեշտության պարագաներ (ԱԱՊ)

- ՄԱԿ ՓԳՀ-ն համայնքապետարանների պահանջով տեղում ձեռք բերված առաջին անհրաժեշտության պարագաներ (ԱԱՊ)՝ ծալովի մահճակալները անկողնային հավաքածուներ եւ ծածկոցներ է բաշխում Գորիսի եւ Վայքի համայնքապետարաններին ու մայրաքաղաք Երեւանի մերձակա բնակավայրերում:
- Հայաստան են ուղեւորվել 15 բեռնատարներ, որոնք բեռնված են ԱԱՊ-ներով, այդ թվում ծածկոցներ, մահճակալներ, խոհանոցային հավաքածուներ, եւ նախատեսված են մոտավորապես 7,000 փախստականի համար: Սեպտեմբերի 30-ին ժամանել է առաջին բեռնատարը եւ ապրանքներն արդեն առաքվել են տարբեր համայնքապետարաններ:

Համակարգում

ՄԱԿ ՓԳՀ-ն ՄԱԿ գործակալությունների եւ մարդասիրական կազմակերպությունների հետ առաջնորդում է փախստականների կարիքներին արձագանքման միջգործակալական ջանքերը, աշխատելով ՄԱԿ-ի մշտական համակարգողի գրասենյակի հետ: Պետական մարմինների համագործակցությամբ ամփոփվում է **Փախստականների կարիքներին արձագանքման ծրագիրը (ՓԿԱԾ),** որին ներգրավված են նաեւ մարդասիրական կառույցները: Ընթացքի մեջ է նաեւ **կարիքների համատեղ արագ գնահատման** գործընթացը:

ՄԱԿ ՓԳՀ-ն երախտապարտ է դոնոր կառույցներին աջակցության համար. Բելգիա | Կանադա | Դանիա | Ֆրանսիա | Գերմանիա | Իռլանդիա | Նիդեռլանդներ | Նորվեգիա | Շվեդիա | Շվեյցարիա | Միացյալ Թագավորություն | Ամերիկայի Միացյալ Նահանգներ

Մանրամասն տեղեկությունների համար կապ հաստատել. ՄԱԿ ՓԳՀ Հայաստան, armye@unhcr.org